ՏԱՅՔԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՏԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ԱՐՄԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Տայքի իշխանության պատմության ուսումնասիրությունը հայ Բագրատունիների տերության օրոք ունի կարևոր նշանակություն, քանի որ մինչև օրս այն ընկալվում է ոչ միանշանակ՝ դիտվելով որպես Կղարջքի Բագրատունիների իշխանության մեջ մտնող մի երկրամաս:

Տայքը Սասանյան Պարսկաստանի տիրապետության ժամանակ մտնում էր Հայքի մարզպանության մեջ, իսկ Տայքին հյուսիսից սահմանակից Մեծ Հայքի թագավորության Գուգարքի բդեշխությունը, որ տարածքով համապատասխանում էր Մեծ Հայքի Գուգարք աշխարհին[1], Սասանյանները միացրել էին Վիրքի մարզպանությանը[2]: Արաբները մեծավ մասամբ պահպանեցին գոյություն ունեցող վարչական բաժանումը, որի հետևանքով Տայքը մաս էր կազմում Արմինիա ոստիկանության Երրորդ Արմինիա վարչական շրջանի, որի մեջ մտնում էին նաև Վասպուրականը, Դվինը, Շիրակը, Բագրևանդը և Նախճավանը[3], իսկ Գուգարքը՝ Երկրորդ Արմինիայի[4]:

Վարչաքաղաքական այս իրավիճակն էր տիրում տարածաշրջանում, երբ Հայաստանում հզորացած Բագրատունիները սկսեցին Հայաստանի քաղաքական անկախության վերականգնման գործընթացը:

774–775 թթ. հայոց հուժկու ապստամբությունը կտրուկ փոխեց իրավիճակն Արմինիայում: Արաբներն անզոր գտնվեցին այստեղ ունեցած ուժերով այն ճնշել և որդեգրեցին նոր քաղաքականություն: Բացի այն, որ ապստամբությունից հետո նրանք Արմինիա տեղափոխեցին արաբական մեծաթիվ ցեղեր. Արմինիայում ի-

---

[1] *Տե՛ս* Բ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. *Մեծ Հայքի Գուգարք աշխարհը ըստ «Աշխարհացույց»-ի.– «Բանբեր Երևանի համալսարանի», 1977, -2, էջ 187–188:*

[2] *Նույն տեղում:*

[3] *Տե՛ս* I b n K h o r d â d b e h. Kitáb al-masâlik wa'l-mamâlik.– Bibliotheca geographorum arabicorum (*այսուհետև՝* BGA, I–VIII, 1967), VI, Lugd. Bat., 1967, p. 122, I b n a l - F a k i h a l - H a m a d h a n i. Kitáb al-boldân.– BGA, V, Lugd. Bat., 1967, p. 290–291, B a l a z u r i. Kitab futuh al-buldan, al-Kahira, 1956, p. 231, Kitáb al-a'lâk an-nafîsa auctore Abû-Ali Ahmad-ibn-Omar ibn Rosteh et Kitâb al-Boldân auctore Ahmed ibn Abî Jakûb ibn Wâdhih al-Kâtib Al-Jakûbî.– BGA, VII, Lugd. Bat., 1967, p. 364, Jacut's Geographisches Wörterbuch aus den Handschriften (*այսուհետև՝* Jacut), Leipzig, 1924 (in sechs Bänden), b. I, S. 219–220.

[4] *Տե՛ս* I b n K h o r d â d b e h. Kitáb al-masâlik wa'l-mamâlik.– BGA, p. 120; I b n a l - F a k i h a l - H a m a d h a n i. Kitáb al-boldân.– BGA, p. 290–291, Jacut, I, S. 219–220: *Տե՛ս Ա. Ե ղ ի ա զ ա ր յ ա ն. Արմինիա ոստիկանությունը (պատմա-աշխարհագրական ուսումնասիրություն).– Պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2006, էջ 10–11:*

րենց տիրապետությունը պահպանելու համար հույս էին կապում նույն այդ ապստամբությունից հետո աննախադեպ հզորության հասած Բագրատունիների հետ: Ապստամբությունից հետո դրան մասնակցած Բագրատունիների մի ճյուղը, փախչելով արաբների վրեժխնդրությունից, հեռացավ իր տիրույթներից և ապաստանեց Կղարջքում: Վարդան վարդապետը Բագրատունիների այդ ճյուղի մասին պատմում է. «Սմպատ Բագրատունի, և զկնի նորա Աշոտ, որդի Վասակայ, զոր կուրացուցին Մամիկոնեանքն. սմա լինին երկու որդիք, Սմբատ՝ նախնի թագաւորացն հայոց, և Վասակ սկիզբն թագաւորացն Վրաց. որոյ որդին Ատներսեհ, սորա՝ Աշոտ, սորա՝ Բագարատ, որոյ եղբայրն Գորամ, հետ սմա՝ Դաւիթ որդի Բագարատայ՝ որ սպանաւ ի Գորամայ հօրեղբօրէ իւրմէ, որոյ որդին Ատներսեհ, սորա որդի Դաւիթ. սմա եղբօրորդի Գուրգէն, որոյ որդին Բագարատ, որ առ իւր կին զդուստր Սենեքերիմայ թագաւորին Վասպուրականի… Իսկ հայոց նախնոյն Սմբատայ որդի Աշոտ Մսակեր…»[5]: Կղարջք հեռացած Բագրատունին եղել է Վասակը: Գիտական գրականության մեջ ընդունված է այն կարծիքը, թե Վասակը հաստատվել է Տայքի հյուսիսային մասում (Կող գավառ) և Կղարջքում, որոնք դրանից հետո էլ շարունակել են մաս կազմել, այսպես կոչված, վրացական Բագրատունիների տիրույթների[6]: Այս խնդրին դեռ կանդրադառնանք, իսկ այժմ նշենք, որ մեզ այդ կարծիքը որոշ առումներով թվում է կասկածելի: Սկզբում նշենք, որ դրա հիմքը «Վրաց տարեգրության» պահպանած այն հաղորդումն է, թե Վասակի որդի Ատներսեհը տիրում էր Ստորին Տայքին (իմա՛ Կող գավառ) և Ասիսփորիին (թերևս, Արսեաց փոր)[7]: Այս տեղեկությունը հակադրվում է նշված դեպքերի ժամանակակից Ղևոնդի այն վկայությանը, որ 774–775 թթ. ապստամբությունից հետո ստեղծված անելանելի իրավիճակից մղված՝ Ամատունիները և որոշ այլ նախարարներ՝ 12 հազար ժողովրդով, հեռացան իրենց տիրույթներից և հասան «ի սահմանս Վրաց ի գաւառն Կող»[8]: Այս վկայությունը ցույց է տալիս, որ Տայքի հյուսիսային Կող գավառը չէր գտնվում Երկրորդ Արմինիայի մեջ, այլ մաս էր կազմում այդ վարչական շրջանին հարավից սահմանակից Երրորդ Արմինիայի: Բացի այդ, մինչև այժմ անհայտ է, թե ե՞րբ են Բագրատունիների կրտսեր ճյուղի ներկայացուցիչները տեղափոխվել Կղարջք: Կարող է լինել երկու տարբերակ: Առաջինը Ն. Ադոնցի տեսակետն է, ըստ որի այդ իրադարձությունը տեղի է ունեցել 775 թ.[9]: Երկրորդ՝ հնարավոր է, որ դա տեղի է ունեցել հենց Ամատունիների գաղ-

---

[5] *Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի (այսուհետև՝ Վ ա ր դ ա ն վ ա ր դ ա պ ե տ), Վ ա ր դ ա ն Ա ր և ե լ ց ի. Տիեզերական պատմություն, 2001, Երևան, էջ 87–88:*

[6] Մ. Լ ո ր դ կ ի պ ա ն ի դ զ ե. Возникновение новых феодальных государств.– Очерки истории Грузии, т. II, Тбилиси, 1988, с. 306–316.

[7] *Տե՛ս* Матиане Картлиса, пер., введение и примеч. М. Лордкипанидзе, Тбилиси, 1976, с. 28.

[8] *Պատմութիւն Ղևոնդեայ Մեծի վարդապետի Հայոց (այսուհետև՝ Ղ և ո ն դ), Ս. Պետերբուրգ, 1887, էջ 168-169:*

[9] *Տե՛ս Ն. Ա դ ո ն ց. Պատմական ուսումնասիրություններ, Փարիզ, 1948, էջ 93: Ա. Տեր-Ղևոնդյանը կարծիք է հայտնել, թե այդ իրադարձությունը տեղի է ունեցել 775–784 թթ. (տե՛ս* А. Т е р - Г е в о н д я н. Армения и Арабский Халифат. Ереван, 1977, с. 124*):*

թի ժամանակ, այսինքն՝ 789 թ.[10]: Ի դեպ, Ղևոնդի կողմից Ամատունիների գաղթի երթուղու նկարագրությունը խոսում է երկրորդ տեսակետի օգտին, քանի որ այն անցնում էր Ճորոխ գետի ստորին հոսանքի շրջանով[11]: Թերևս, առավել հավանական է Ն. Ադոնցի կարծիքը, քանի որ ապստամբությանը մասնակից Բագրատունիները պետք է անմիջապես հեռանային իրենց տիրույթներից, այլապես կենթարկվեին արաբների վրեժխնդրությանը: Սա առավել ևս խոսում է մեր տեսակետի օգտին: Եթե Վասակն արդեն հեռացել էր Կղարջքի կողմերը 775 թ. կամ դրանից քիչ անց, ապա 789 թ. դրությամբ Կող գավառը՝ ըստ Ղևոնդի, ինչպես նաև մնացյալ Տայքը դուրս է նրա տիրույթներից: Պատմիչի ընկալմամբ Վիրք հասկացությունը նույնանում է Երկրորդ Արմինիային՝ ընդգրկելով նաև Գուգարքը, ինչի պատճառով էլ Կող գավառից հյուսիս գտնվող Գուգարքը նշվում է որպես Վիրքի մաս: Մեկ այլ ընկալմամբ հայ պատմիչների երկասիրություններում Վիրք հասկացությունը նույնանում է այն տարածքներին, որոնք պատկանում էին հետագայում հայոց Սմբատ Ա Տիեզերակալ Բագրատունու (890–914) կողմից Վրաց թագավոր կարգված Ատրներսեհ Բագրատունուն: Այդ հարցը մանրամասնորեն կքննենք ստորև: Ինչպես տեսնում ենք, Կող գավառը վերոհիշյալ երկու ընկալումներով էլ դուրս է մնում Վիրք հասկացությունից: Դա է ապացուցում նաև Վարդան վարդապետի այն տեղեկությունը, թե երբ խալիֆան Վասակի որդի Ատրներսեհի որդի Աշոտին տվեց Վիրքը, նա սկզբում «տիրեաց ի Կաղրջաց մինչև ի Տփխիս, լեռնակողմամբն հանդերձ»[12]: Այսինքն՝ Աշոտը տիրում էր Գուգարքի Կղարջք գավառը և այնտեղից էլ սկսեց սկզբում Գուգարքի, իսկ այնուհետև՝ Վիրքի նվաճումը: Աշոտն իր ծրագրերն իրականացնելիս բախվեց Տփղիսի ամիրայությանը, պարտություն կրեց ու նահանջեց Կղարջք՝ ամր անալով Արտանուջ բերդում[13]: Ինչ վերաբերում է Տայքին, ապա այն, ինչպես նաև 774–775 թթ. ապստամբությունից հետո Հայաստանի քաղաքական թատերաբեմից հեռացած Մամիկոնյանների և Կամսարականների մյուս տիրույթները, ժառանգական իրավունքով անցել էր Բագրատունիներին, քանի որ հայոց իշխան Աշոտ Մսակերի (790–826) մայրը Մամիկոնյան էր, իսկ Մամիկոնյաններն ապստամբությունից առաջ տիրում էին Տայքին[14]: Այսինքն՝ 774–775 թթ. ապստամբությունից հետո տեղի են ունենում երկու կարևոր իրադարձություն. 1. Տայքը տիրում է Աշոտ Մսակեր Բագրատունին, 2. Կղարջքում հաստատվում են ապստամբությանը մասնակից Բագրատունիների ճյուղի մնացորդները:

---

[10] *Ըստ Ղևոնդի՝ Ամատունիների գաղթը տեղի է ունեցել Արաբական խալիֆայության Հյուսիսային փոխարքայության փոխարքա Ոմբեղայի կամ Ուբայդալլահի (788–791) և Արմինիա ոստիկանության արաբ ամիրա (ոստիկան) Սուլեյմանի (788–790) իշխանության երկրորդ տարում, այսինքն՝ 789 թ. (տե՛ս* Ղ ևոնդ, *էջ 166–169):*

[11] *Տե՛ս* Ղ ևոնդ, *էջ 166–169:*

[12] Վ արդան վարդապետ, *էջ 84:*

[13] *Տե՛ս* Вахушти Багратиони. История царства Грузинского, пер. Н. Накашидзе. Тбилиси, 1976, с. 187; М. Лордкипанидзе. *Նշվ. աշխ., էջ 248, 307–308:*

[14] *Տե՛ս* Վ արդան վարդապետ, *էջ 84:*

Երկրորդ Արմինիայի այս շրջաններից միասնական կենտրոնաձիգ իշխանության ստեղծման դրոշով հանդես եկան Կղարջքի Բագրատունիները, որոնց ներկայացուցիչ Աշոտը, ինչպես նշում է Վարդան վարդապետը, խալիֆայից իշխանություն էր ստացել Վիրքի վրա: Նրա իշխանությունը շուտով ճանաչեց նաև Բյուզանդիան: «Եվ տայր իշխանն Իսմայելի Աշոտի որդւոյ Ատներսեհի որդւոյ Վասակայ, որդւոյ Աշոտոյ հայոց իշխանի՝ զերկիրն Վրաց. որոյ երթեալ հնազանդեցուցանէ ինքեան. և կայսրն առաքէ նմա պատիւ կիւրապաղատութեան»[15] և, ինչպես տեսանք, «Բայց կիւրապաղատն Աշոտ տիրեաց ի Կաղրջաց մինչև ի Տփխիս, լեռնակողմամբն հանդերձ»: Դատելով «Վրաց տարեգրության» այն հաղորդումից, թե Աշոտի հայր Ատներսեհը տիրում էր Շավշեթին, Կղարջքին, Նիգալին, Ագարին (Աջար), Սամցխեին և հարակից որոշ շրջաններ[16], կարելի է եզրակացնել, որ նաև Աշոտի իշխանության մեջ ներառված էին հիշյալ գավառները, որին կանդրադառնանք ստորև: Նույն 826 թ. վախճանվեցին հայոց իշխան Աշոտ Մսակեր Բագրատունին և Կղարջքի իշխան Աշոտը: Աշոտ Մսակերի օրոք Բագրատունիներն Արմինիայում անչափ հզորացան: Եվ եթե Աշոտ Մսակերը հասավ իր բոլոր նպատակների իրականացմանը, ապա սկզբում խալիֆաների, իսկ այնուհետև Բյուզանդիայի հովանավորությունը փնտրող Կղարջքի իշխան Աշոտը պարտություն կրեց և ի վերջո սպանվեց: Արաբները գրավեցին նրա տիրույթները[17]: Աշոտ Մսակերի որդի Բագարատի (հայոց իշխան 826–851 թթ.) օրոք Բագրատունիների վերելքը շարունակվեց: Բագարատը քաղաքական թատերաբեմում հայտնվեց խալիֆայության համար անչափ դժվար պայմաններում: Բաբեկի ապստամբությունից և այլ ելույթներից ցնցվող հսկա կայսրությունը սկսում է ծայրամասերում իշխանությունը պահպանելու գործում հույսը կապել տեղերի իշխանական հզոր տների հետ: Այս պայմաններում Բագարատը խալիֆայից ստանում է «բաթրիկ ալ-բաթրիկա»-յի, այսինքն՝ Արմինիայի «իշխանաց իշխան»-ի պաշտոնը[18], որ նշանակում էր խալիֆայության կողմից նրա իշխանության ճանաչում ողջ Արմինիայում: Բագարատն իրեն այնքան վստահ էր զգում, որ խալիֆայից նույնիսկ պահանջում էր Արմինիայի ոստիկանի լիազորությունները[19]: Կղարջքի Բագրատունիները լավ հասկաց ան, թե որ կողմից է փչում հաջողության քամին և բավական երկար ժամանակով իրենց նկրտումների իրականացումը կապեցին իրենց ավագ ճյուղի օգնության հետ: Աշոտի որդի Բագարատի և նրա որդի Դավթի մասին շատ բան ասել չենք կարող: «Վրաց տարեգրություն»-ը հաղորդում է, որ Աշոտի որդի Գոռամը տիրեց Ջավախքը, Թռեղը, Տաշիրքը, Աշոցքը և Արտահանը, որից հետո իր տիրույթները բաժանեց եղբայրների՝ Ատներսեհի և Բագարատի հետ, իսկ Աշոցքը՝ հայոց թագավորի հետ[20]: Վախուշտի Բագրատունին, որ օգտվել է իր նախորդ պատմիչների հաղորդումներից, տեղեկացնում է, որ Աշոտի որդիներից Բագարա-

---

[15] *Վ ա ր դ ա ն վ ա ր դ ա պ ե տ, էջ 83:*

[16] *Տե՛ս* Матиане Картлиса, с. 28–29.

[17] *Նույն տեղում, էջ 29:*

[18] *Տե՛ս* Tarikh at-Tabari, VI, Beyrut, p. 288.

[19] *Նույն տեղում:*

[20] *Տե՛ս* Матиане Картлиса, с. 31.

տը տիրել է Քարթլին և Վերին Քարթլին կամ Սամցխեն, Ատրներսեհը՝ Կղարջքը, իսկ Գոռամը՝ Ջավախքը, Թռեղքը և Աշոցքը ու Հայաստանի որոշ հատվածներ[21]: Եթե համեմատենք վրացական երկու աղբյուրների տեղեկությունները Գոռամի տիրույթների առումով, ապա կտեսնենք, որ Արտահանը և Տաշիրքը դիտվում են որպես Հայաստանի մաս, որ և համապատասխանում է իրականությանը: Բացի այդ, եթե քարտեզագրենք երեք եղբայրների տիրույթները, ակնհայտ կդառնա, որ Ատրներսեհը տիրում էր բուն Կղարջք գավառը, Գոռամը՝ հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք հերթականությամբ տեղաբաշխված Արտահանը, Ջավախքը, Աշոցքը, Թռեղքը, ինչպես նաև Ջավախքի արևելքում գտնվող Տաշիրքը, իսկ Բագարատի տիրույթը՝ Վերին Քարթլին կամ Սամցխեն հյուսիսում սահմանակցում էր Ափխազական թագավորությանը, իսկ հարավում՝ Գոռամի տիրույթներին: Սամցխեն արևմուտքում սահմանակցում էր Ագարին կամ Աջարին (Աճարա կամ Եգր), իսկ հարավ-արևմուտքում՝ Շավշեթին: Ամենայն հավանականությամբ, Բագարատի տիրույթ «Քարթլի»-ն վերաբերում էր Ագարին և Շավշեթին և ոչ մի կերպ Տայքի հյուսիսային գավառներին, որոնցից Բագարատի տիրույթները բաժանված էին Գոռամի հողերով: Բացի այդ, վրացական աղբյուրներում երեք եղբայրների տիրույթների մեջ Տայքի որևէ հատվածի չհիշատակվելը խոսում է այն բանի օգտին, որ նրանց տիրույթները տեղաբաշխված էին Տայքից հյուսիս և հյուսիս-արևելք: Իրավիճակը Կղարջքի Բագրատունիների մասին տեղեկությունների առումով կտրուկ փոխվեց Դավթի որդի Ատրներսեհի օրոք: Բուղայի ավերիչ արշավանքից հետո Արմինիայի քաղաքական ասպարեզում հայտնվեց մի խելացի և հաջողակ քաղաքական գործիչ՝ Աշոտ Բագրատունին (հայոց իշխան՝ 855 թվականից, Արմինիայի իշխանաց իշխան՝ 862 թ.): Թովմա Արծրունին հաղորդում է, որ «հաւատացեալ էր վերակացութիւն աշխարհիս հայոց Աշոտի, որ իշխանաց իշխան՝ ձեռն ի գործ արկեալ նուաճել զիշխանս հայոց, զՎրաց և զԱղուանից, որ եղն իսկ»[22], իսկ Հովհաննես Դրասխանակերտցին վկայում՝ որ Ալի Արմանի ոստիկանը Աշոտին տվեց ոստիկանի լիազորությունները[23]: Վարդան վարդապետը տեղեկացնում է, որ Գևորգ կաթողիկոսի ժամանակ «ընդարձակեալ մեծին Աշոտի ի Վիրս և Աղուանս, և զԿաւկասայինսն հնազանդեալ, և չէր ինչ պակաս՝ բայց ի թագէ»[24]: Այս տեղեկությունների մեջ «Վիրք» և «Վրաց իշխան» (կամ իշխաններ) հասկացությունները վերաբերում են ինչպես բուն Վիրքին, այնպես էլ Կղարջքի Բագրատունիներին, այսինքն՝ Աշոտ Բագրատունին իրեն էր ենթարկել Կղարջքը, մնացյալ Գուգարքը, Վիրքը, Կովկասյան լեռների լեռնականներին և հասել Ալանաց դռանը: Ըստ որում՝ այդ նվաճումը տեղի էր ունեցել Խալիֆայության հավանությամբ:

---

[21] *Տե՛ս* Вахушти Багратиони. *Նշվ. աշխ., էջ 187:*

[22] *Թովմա Արծրունի և Անանուն. Պատմութիւն տանն Արծրունեաց, բնագիրը հրատարակության պատրաստեց Վ. Վարդանյանը, Երևան, 1985, էջ 322:*

[23] *Տե՛ս Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմություն Հայոց (այսուհետև՝ Հովհաննես Դրասխանակերտցի), աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Գ. Թոսունյանի, Երևան, 1996, էջ 136:*

[24] *Վարդան վարդապետ, էջ 91:*

Աշոտ Ա թագավորը (885–890), ըստ Հովհաննես Դրասխանակերտցու, «ապա ձեռն զհիւսիսական կողմամբք արկեալ ի ծործորս մեծի լերինն Կովկասու, որ ի հովիտն և ի ձորս երկայնագոգս բնակեալք էին ազգք ընդ իւրեաւ հնազանդեցուցանէր. այլ և զաղխատրոյզ բնակիչսն Գուգարաց և զելուզակուտ մարդիկ Ուտի գաւառի առհասարակ ընդ ձեռամբ նուաճէր… և առաջնորդս և իշխանս նոցա կացուցանէր: Այլ և զթագաւորն Եգերացւոց (իմա՛ ափխազաց – Ա. Ե.) ի սէր միաբանութեան ընդ իւր կապակցեալ՝ այնպէս նմա այցելէր, մինչ զի անընդհատ յորդիութեան սակի գոլով՝ մտերմաբար պարտավճար միշտ նմա ի ծառայութիւն բերէր»[25]:

Այնուհետև՝ Աշոտ Ա-ն «դնէ իշխան Վրաց զքեռորդի իւր, և ինքն կատարի ի Քրիստոս»[26]: «Իշխան Վրաց» արտահայտությունը, անկասկած, վերաբերում է Կղարջքի Բագրատունիներին: Հենց այդ ժամանակ է, որ հայ Բագրատունիները Կղարջքի Բագրատունիներին իշխանություն են տալիս Վիրքի վրա: Ըստ որում՝ «իշխան Վրաց» տիտղոսն էլ նրանց տրվել է հայոց արքայի կողմից դեռևս այն ժամանակ, երբ նրանք տիրում էին միայն Կղարջքը և շրջակայքի որոշ շրջաններ[27]:

Աշոտ Ա-ն վախճանվել է 890 թ.: Նրա որդի և հաջորդ Սմբատը թաղմանը չէր մասնակցում, քանի որ հոր հրամանով այդ նույն ժամանակ զբաղված էր Գուգարքի ենթարկումով: Նրան սփոփելու է մեկնում Կղարջքի Ատրներսեհ իշխանը, նա, ում Աշոտ Ա-ն մահից առաջ նշանակել էր «Վրաց իշխան»: Այնուհետև Ատրպատականի ամիրա Ափշինը խալիֆայից թագ է բերում և Ատրներսեհի միջոցով մատուցում Սմբատին[28]:

Այսպիսով՝ 890 թ. հայոց գահին է բազմում հայոց պետականության պատմության մեջ ամենաինքնատիպ գահակալներից մեկը՝ Սմբատ Ա-ն (890–914): Նրա օրոք վերջնականապես ձևավորվում է հայ Բագրատունիների տերության վարչաքաղաքական համակարգը: Պատմիչների տեղեկությունները հստակ պատկերացում են տալիս այդ համակարգի մասին: «Եւ այսպէս ձգտեալ աճեցուցանէր զշաւիղ տէրութեան իւրոյ յարևմտից հիւսիսոյ մինչև ցԿարնոյ քաղաք, և անդր ևս քան զԿղարջս՝ քերեալ մինչև առ ափն ծովուն մեծի, և մինչև ցսահմանս Եգերացւոց և մինչև ցստորոտ մեծի լերինն Կովկասու, զԳուգարացիս և ցԾանարս մինչև ցԴուռն Ալանաց, առեալ ևս յինքն և զամրոց դրան պահակի նոցա. և անտի ի հարաւակողմն կոյս զԿուր գետով մինչև ի քաղաքն Տփխիս. և զՈւտի գաւառ մինչև ի քաղաքն Հունարակերտ և մինչև ի Տուս և ի՝ Շամքոր: Եւ այսպէս ընդարձակեալ զսահման տէրութեան իւրոյ, որ ընդ լծով արքունի սակից և բեկարաց և մաքսից կացուցեալ՝ զզէն քաջութեան մարտի իւրոյ նշան յաղթութեան կանգնէր»[29]:

Անհրաժեշտ է անդրադառնալ Սմբատ Ա-ի տերության վարչաքաղաքական համակարգը լուսաբանող անչափ կարևոր սկզբնաղբյուրի՝ կարծեցյալ Շապուհի «Պատմության»-ը: Պատմիչը հաղորդում է. «թագաւորեաց տանն հայոց Սմպատ,

---

[25] *Տե՛ս Հ ո վ հ ա ն ն ե ս Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի, էջ 142:*
[26] *Նույն տեղում, էջ 91:*
[27] *Տե՛ս Ն. Ա դ ո ն ց. նշվ. աշխ., էջ 122:*
[28] *Տե՛ս Հ ո վ հ ա ն ն ե ս Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի, էջ 146–150:*
[29] *Նույն տեղում, էջ 164:*

որդի Աշոտոյ: Եւ էր նայ այր գոռոզ և պատերազմող և առատամիտ: Եւ աջողեցաւ ճանապարհ թագաւորութեանն նորայ:…Եւ նայ տիրեաց ամենայն աշխարհին հայոց և ընդ ձեռամբ էած զՀայք և զՏայք, զՎիրք և զԱղվանք և զՎրաց դաշտ…: Եւ առեալ տիրեաց նմայ զՓայտակարանն, որ է Տփխիս…: Եւ մեծամտեցաւ և անուանեաց զինքն Սըմպատ տիեզերակալ...Սըմպատ Հայոց և Վրաց թագաւոր և տիեզերակալ, բազում գաւառաց ինքնակալ»[30]: Կարծեցյալ Շապուհ Բագրատունու տեղեկությունն արտացոլում է հայ Բագրատունիների տերության վարչաքաղաքական բաժանման հետևյալ պատկերը.

«Ամենայն աշխարհին հայոց»-ը հայ Բագրատունիների տերությունն է, որ ընդգրկում էր՝ 1. Հայքը, 2. Տայքը, որտեղ առանձին իշխանություն է ձևավորվել, 3. Վիրքը՝ Կղարջքի կյուրոպաղատության և բուն Վիրքի ընկալումով, 4. Աղվանքը, 5. Վրաց դաշտը, այսինքն, հավանաբար, Կուր գետի՝ Տփղիսից արևմուտք ընկած հովիտը, 6. Տփղիսի ամիրայությունը:

Սակայն կարծեցյալ Շապուհ Բագրատունու մի կարևոր հաղորդումը մեզ է ներկայացնում հայ Բագրատունիների տերության հիմնական չորս վարչաքաղաքական միավորները Սմբատ Ա-ի օրոք: Մոսուլի ամիրան սպառնում է ներխուժել Սմբատ Ա-ի տերություն, և «յորժամ լուաւ զայս թագաւորն Սըմպատ՝ էհան հրամանս ընդ ամենայն աշխարհին Հայոց և Վրաց և Աղուանից և Տայոց»[31]:

Այսպիսով՝ Սմբատ Ա Տիեզերակալի օրոք հայ Բագրատունիների տերությունը բաղկացած էր չորս հիմնական վարչաքաղաքական միավորներից՝ Հայքից, Վիրքից, այսպես կոչված, Աղվանքից և Տայքից:

Տայքում արդեն Սմբատ Ա-ի օրոք գոյություն ուներ նոր իշխանություն, որտեղ ապաստանում է Ափշինի կողմից հալածվող հայոց արքան[32]: Հովհաննես Դրասխանակերտցին հաղորդում է, թե Տայքը Կղարջքի Ատրներսեհ իշխանի կալվածքն էր[33]: Արդեն համոզվեցինք, որ Ատրներսեհի նախորդները չէին տիրում Տայքը կամ էլ դրա որևէ հատվածը: Անկասկած, պատմիչը կամ թյուրիմացության մեջ է, կամ էլ նկատի ունի ոչ թե ողջ Տայքը, այլ նրա հյուսիսային Կող գավառը, որը որոշ ժամանակով, թերևս, տիրել էին Կղարջքի Բագրատունիները: Երկրորդ հնարավորությունն ավելի իրական է, քանի որ դրա հաստատումն է, թերևս, կարծեցյալ Շապուհ Բագրատունու հետևյալ հաղորդումը: Սմբատ Ա-ն ափխազաց Դատոս թագավորի դստերը կնության է բերում իր որդի Մուշեղին և դրանից հետո որոշում տիրել ափխազաց թագավորության մեջ մտնող Կանգարք, Գոգշեն, Զայլցեղ, Կող ու Արտահան գավառները, որը և իրականացվում է[34]: Դրա պատճառով Ափխազաց թագավորը ձերբակալում է Մուշեղին, իսկ Սմբատ Ա-ի զորքերը ներխուժում են ափխազաց թագավորություն և հասնում Գորի, որտեղ գտնվում էր Դա-

---

[30] *Պատմութիւն Շապհոյ Բագրատունւոյ, ի լոյս ածին Գ. Տէր-Մկրտչեան եւ Մեսրոպ եպիսկոպոս, Էջմիածին, 1921, էջ 65–67:*

[31] *Նույն տեղում, էջ 72: Սրանց թվում նշվում է նաև Վասպուրականը, սակայն վերջինս դեռ առանձին վարչաքաղաքական միավոր չէ:*

[32] *Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 180–182:*

[33] *Նույն տեղում, էջ 188:*

[34] *Տե՛ս Պատմութիւն Շապհոյ Բագրատունւոյ, էջ 81:*

տոսը Մուշեղի հետ: Սմբատ Ա-ի հետ էին նաև Տայքի իշխան Գոռամը և Կղարջքի կյուրոպաղատ Ատրներսեհը: Ափխազաց թագավորը գերվում է, ազատում Մուշեղին և Սմբատ Ա-ին զիջում Կանգարքը, Գոգշենն ու Կողը[35]: Այս տեղեկությունը որքան էլ որ հակասական է, պարունակում է կարևոր իրողություններ: Անհավանական է, որ Ափխազաց արքան տիրում էր այն գավառներին, որոնք պատկանում էին Կղարջքի Ատրներսեհ իշխանին, ինչպես նաև Գորիին, որը, գտնվելով կենտրոնական Վիրքում, Սմբատ Ա-ի տիրույթն էր: Մյուս գավառները ևս, հանդիսանալով Սմբատ Ա-ին ենթակա Կղարջքի Ատրներսեհ Բագրատունու իշխանության մաս, ևս Սմբատ Ա-ի տիրույթն էին: Այս վկայությունը, մեր համոզմամբ, պարունակում է խառնաշփոթ ժամանակագրական տվյալներ, ինչը երևում է Հովհաննես Դրասխանակերտցու՝ նույն իրադարձության նկարագրության ժամանակ: Եգերքի կամ Ափխազաց թագավոր Կոստանդինն արշավում է Գուգարքի և Ալանաց դռան շրջակայքում բնակվող ցեղերի վրա, իսկ Ատրներսեհ Բագրատունին նրան զգուշացնում է այդ քայլից, քանի որ այդ տարածքներին տիրում էր Սմբատ Ա-ն: Կոստանդինը կանգ չի առնում, որի հետևանքով ենթարկվում է Սմբատ Ա-ի արշավանքին, պարտություն կրում և գերվում: Սմբատ Ա-ն գրավում է ափխազաց թագավորությունը, որի ամրոցներում հայ կուսակալներ և կայազորներ է տեղակայում: Սակայն երբ հայտնի է դառնում, որ ափխազները նպատակ ունեն ուրիշին ափխազաց թագավոր դարձնել, Սմբատ Ա-ն Կոստանդինին բաց է թողնում, առավել ևս, որ նա դարձել էր Ատրներսեհի փեսան: Դրանից հետո Կոստանդինը մինչ ի մահ հավատարիմ մնաց Սմբատ Ա-ին[36]: Այս տեղեկությունների համադրությունը ցույց է տալիս հետևյալը: Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ Կոստանդինը հարձակվել էր Գուգարքի վրա, իսկ ըստ կարծեցյալ Շապուհ Բագրատունու՝ Դատոսը տիրում էր Գուգարքի մի շարք գավառների և Տայքի Կող գավառը:

Այս ամենին ավելացնենք նաև «Վրաց տարեգրության» հաղորդումն այդ իրադարձության վերաբերյալ և տանք մեր եզրակացությունն երը: Կոստանդինն արշավում է Վիրք և նվաճում այն: Սմբատ Տիեզերակալն արշավանքի է ելնում, պաշարում ափխազաց թագավորության ամենակարևոր նշանակություն ունեցող ամրոցներից Ուփլիսցխեն ու գրավում գրոհով: Դրանից հետո երկու թագավորները հաշտվում են, և Սմբատ Ա-ն Կոստանդինին է վերադարձնում Վիրքը և Ուփլիսցխեն[37]:

Ակնհայտ է, որ Տայքի Կող գավառը Սմբատ Ա-ն նախապես արդեն կամ հենց այդ ժամանակ կցել էր իր տիրույթներին (հնարավոր է նաև, որ այդ իրադարձությունը տեղի ունեցած լիներ ավելի ուշ, որին կանդրադառնանք ստորև), որն այլևս - դադարել էր Ատրներսեհի տիրույթը լինելուց, ուստի և ափխազները ոտնձգել են հայ Բագրատունիների արքունի տիրույթների դեմ: Տայքի իշխանը Գոռամն էր, որ մասնակցեց Սմբատ Ա-ի ափխազական արշավանքին: Երբ «Սմբատ կալեալ զթա-

---

[35] *Նույն տեղում, էջ 83:*

[36] *Տե՛ս Հ ո վ հ ա ն ն ե ս Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի, էջ 202–204:*

[37] *Տե՛ս* Матиане Картлиса, с. 32.

գաւորն Եգերացւոց զԿոստանդին, և ընդ ձեռամբ իւրով նուաճեալ՝ թողու: Ընդ որ զայրացեալ Ատրներսէհ Վրաց թագաւորն՝ հատուածեալ ի նմանէ խորհէր նմա չարիս: Եւ Սաճն անօրէն ապստամբեալ յամիրապետէն նշկահեաց զնա»[38], «առ որ երթեալ Ատրներսէհ Վրաց թագաւոր և Գագիկ իշխան Վասպուրականի, որ էր քեռորդի Սմբատայ, և Աշոտ որդի Շապհոյ, եղբօր Սմբատայ, ամենայն զօրօքն իւրեանց միաբանին ընդ նմա, թողլով ի բաց զթագաւորն Սմբատ՝ նենգագործն նախանձեալ ընդ շինութիւն աշխարհիս Հայոց»[39]: Սմբատ Ա-ն իր նախարարներով և զորքով հեռացավ ափխազաց թագավորություն: Ատրպատականի նոր Ամիրա Յուսուփը հետապնդեց նրան, ապա գնաց Տփղիս: Իսկ Սմբատ Ա-ն եկավ Շիրակ: Յուսուփը կրկնեց իր արշավանքները և, ի վերջո, Սմբատ Ա-ն գերվեց ու սպանվեց[40]:

Այս իրադարձությունների մասին Հովհաննես Դրասխանակերտցին հաղորդում է անչափ կարևոր տեղեկություններ: Ըստ պատմիչի, երբ Կղարջքի Ատրներսեհ իշխանը մյուս դավաճանների հետ անհաջող մահափորձ կազմակերպեց Սմբատ Ա-ի դեմ, նա մյուսների հետ փախուստի դիմեց Տայքի ամուր տեղերը[41]: Սրանից կարելի է բխեցնել, որ Տայքի հյուսիսային գավառները դեռևս գտնվում էին Ատներսեհի իշխանության սահմաններում[42]: Սակայն շուտով Սմբատ Ա-ն արշավում և նվաճում է այդ շրջանները[43]: Ատներսեհը ներում է խնդրում: Սմբատ Ա-ն ներում է նրան, բայց նրա որդուն պատանդ է պահում իր մոտ՝ որպես Ատներսեհի հավատարմության գրավական[44]: Ատրպատականի ամիրայի հաջորդ արշավանքի ժամանակ արդեն պատմիչը վկայում է, որ ամիրան հետապնդեց նահանջող Սմբատ Ա-ին, որ գնաց «մինչև յաշխարհ Վրաց... մինչև անկանէր մերձ յանմատչելի յամուրսն Կղարջաց»[45]: Այսինքն՝ «աշխարհ Վրաց»-ն այլևս սկսում է Կղարջքի անմատչելի շրջաններով, ուստի Տայքը մտցվել է հայոց թագավորի տիրույթների մեջ, որտեղ էլ՝ Կղարջքի ամրությունների մոտակայքում, ապաստանում է հայոց տիրակալը: Անանունն այս իրադարձության մասին հաղորդում է, թե Սմբատ Ա-ն Ափշինից նահանջեց «աշխարհն Վրաց»[46]:

Անդրադառնանք նաև Տայքի իշխան Գոռամին, որին հիշատակում է կարծեցյալ Շապուհ Բագրատունին Սմբատ Ա-ի ափխազական արշավանքի ժամանակ: Սկզբնաղբյուրներն այս ժամանակաշրջանում միայն մեկ Գոռամ են հիշատակում[47]: Կարելի է եզրակացնել, որ խոսքը հենց այս Գոռամի մասին է: Դատելով

---

[38] *Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, էջ 163–164:*

[39] *Նույն տեղում, էջ 164:*

[40] *Նույն տեղում, էջ 164–165:*

[41] *Տե՛ս Հ ո վ հ ա ն ն ե ս Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի, էջ 210:*

[42] *Նույն տեղում:*

[43] *Նույն տեղում:*

[44] *Նույն տեղում:*

[45] *Նույն տեղում, էջ 216:*

[46] *Տե՛ս Թ ո վ մ ա Ա ր ծ ր ո ւ ն ի և Ա ն ա ն ո ւ ն. նշվ. աշխ., էջ 424:*

[47] *Եվս մեկ Գոռամի, որ մեռել է 923 թ., հիշատակում է Վախուշտի Բագրատունին: Բայց Վախուշտու տեքստում այս Գոռամն ավելի վաղ հիշատակվում է Գուրգեն անունով, այսինքն՝*

«Վրաց տարեգրությունից»՝ Կղարջքի իշխան Բագարատի եղբայր Գոռամը տիրել էր Ջավախքը, Թռեղքը, Տաշիրը, Աշոցքը (Աբոցի) և Արտահանը[48]: Այնուհետև նա պատերազմեց արաբների դեմ և, թերևս, այդ պայքարում դաշնակիցներ ձեռք բերելու նպատակով սեփական հողերի մի մասը տվեց իր եղբայրներ Ատրներսեհին և Բագարատին, իսկ Աշոցքը՝ կիսեց իր աներձագ հայոց արքայի հետ[49]: Ինչպես պարզաբանել է Ն. Ադոնցը՝ «Վրաց տարեգրության» այս հատվածում սխալ կա: Աշոտ Ա-ի քույրն ամուսնացած էր ոչ թե Գոռամի, այլ Բագարատի հետ[50]: Վերջինիս որդուն՝ Դավթին, հետագայում Գոռամը սպանել տվեց[51]: Մինչ այդ սպանությունը, երբ Վիրքին տիրելու համար պատերազմ ծագեց հայոց և ափխազաց թագավորների միջև, առաջինի կողմում մարտնչում էին Կղարջքի Դավիթ և այդ դեպքերից քիչ առաջ Թռեղքին տիրած Լիպարիտ իշխանները, իսկ երկրորդի՝ Գոռամը՝ իր որդի Նասրայի հետ: Հայոց թագավորը հաղթանակ տարավ: Դրանից հետո մեռավ Գոռամը, որ Աշոտ կյուրոպաղատի (մահ. 826 թ.) որդին էր[52]: Այնուհետև ափխազաց թագավորի օգնությամբ Գոռամի որդի Նասրան Սամցխեում երեք բերդի տիրացավ[53]: Հայոց թագավորը կրկին արշավանքի ելավ և նրա հետ էր Կղարջքի Դավիթ իշխանի որդի Ատրներսեհը: Նասրայի հետ էին ափխազաց և ալանաց թագավորները: Վերջին երեքն էլ սպանվեցին ճակատամարտում, իսկ նրանց բանակը ջախջախվեց[54]: Այս ամենը տեղի ունեցավ Աշոտ Ա-ի օրոք: Եթե Գոռամը մեռել է Աշոտ Ա-ի իշխանության տարիներին, ուրեմն Սմբատ Ա-ի ափխազական արշավանքին մասնակցել է այլ Գոռամ, որ՝ի տարբերություն վերոհիշյալ Գոռամի, Տայքի իշխանն էր: Բացի այդ, Կղարջքի Դավիթ իշխանին սպանող Գոռամը ափխազների դաշնակիցն էր, իսկ Սմբատ Ա-ի օրոք ապրող Գոռամը՝ Հայոց արքայի: Այսպիսով, պարզվում է, որ Կղարջքի Ատրներսեհի իշխանության տարիներին Տայքում իշխում է մի ոմն Գոռամ, որ Ատրներսեհի դավաճանությունից հետո հավատարիմ է մնում Սմբատ Ա-ին: Վերջինս Յուսուփ ամիրայից թաքնվում է հենց Տայքում: Եզրակացությունը միանշանակ է: Տայքի հյուսիսային հատվածը Կղարջքի Ատրներսեհ իշխանի տիրույթներից ամբողջությամբ պոկելով՝ Սմբատ Ա-ն այնտեղ իշխան է կարգել Գոռամին, որ Բագրատունիների տոհմից էր և, նախքան այդ, թերևս, իշխում էր Տայքի կենտրոնական ու հարավային հատվածում: Այսինքն՝ Գոռամ Բագրատունու իշխանության մեջ էր մտնում ողջ Տայքը՝ թե՛ վարչականորեն և թե՛ քաղաքականապես՝ բաժանված լինելով Կղարջքի Բագրատունիների կյուրոպաղատությունից:

Վախուշտին սխալմամբ Գուրգենին կոչում է Գոռամ (տե՛ս Вахушти Багратиони. *Նշվ. աշխ., էջ 188):*

[48] *Տե՛ս* Матиане Картлиса, с. 31.

[49] *Նույն տեղում:*

[50] *Տե՛ս Ն. Ադոնց. նշվ. աշխ., էջ 123:*

[51] *Տե՛ս* Матиане Картлиса, с. 31.

[52] *Նույն տեղում:*

[53] *Նույն տեղում, էջ 32:*

[54] *Նույն տեղում:*

Վերջում անհրաժեշտ է կատարել ևս մեկ ճշգրտում: Տեսանք, որ Կղարջքի առաջին իշխաններից Վասակի որդի Ատրներսեհը տիրում էր Ստորին Տայքին (իմա՛ Կող գավառ) և Ասիսփորիին կամ Տայքի Արսեաց փոր գավառին: Այդ շրջանները արդյոք մա՞ս էին կազմում Ատրներսեհի որդի Աշոտ Կյուրոպաղատի իշխանության, թե ոչ, դժվար է ասել, բայց համոզվեցինք, որ նրա որդիներից և ոչ մեկը Տայքի որևէ հատվածի չէր տիրում: Մեր կարծիքով, իրադրությունը զարգացել է հետևյալ ձևով: 775 թ., երբ ճնշվեց հայոց հուժկու ապստամբությունը, Մամիկոնյանները ջախջախիչ հարված ստացան և դրանից հետո այլևս ուշքի չեկան: Երբ Վասակ Բագրատունին իր որդի Ատրներսեհի հետ գաղթեց Կղարջքի կողմերը՝ 775 թ., դեռևս Բագրատունիները Տայքին չէին տիրում: Վասակի և Ատրներսեհի՝ Տայքի հյուսիսային անմատչելի շրջաններում (ինչպես օրինակ Պարխարյան լեռների շրջանում գտնվող Տայքի Արսեաց փոր գավառում) և Կղարջքում հաստատվելը այդ առումով հասկանալի է: Բայց երբ հայոց իշխան Աշոտ Մսակեր Բագրատունին ժառանգական իրավունքով տիրեց Տայքին, Վասակը և Ատրներսեհը քաշվեցին Կղարջք: Այդ պատճառով ո՛չ Աշոտ Կյուրոպաղատը և ո՛չ էլ նրա որդիները Տայքի որևէ հատվածի չէին տիրում, որն էլ հաստատում են սկզբնաղբյուրները:

Ամփոփելով քննության արդյունքները՝ նշենք, որ Կղարջքի Բագրատունիները սկզբնապես կարճ ժամանակով կարողացել են տիրել Տայքի հյուսիսային որոշ շրջաններ, բայց շուտով ողջ Տայքին տիրել է հայոց իշխան Աշոտ Մսակերը: Կարճ ժամանակով միայն Կղարջքի Ատրներսեհ Բագրատունի իշխանը, որ Աշոտ կյուրոպաղատի թոռնորդին էր, կարողացել էր կրկին տիրել Տայքի հյուսիսային որոշ հատվածների: Սմբատ Ա-ն ափխազական արշավանքի և Կղարջքի իշխան Ատրներսեհի դեմ ուղղված պատժիչ արշավանքի ժամանակ Տայքի վերոհիշյալ հատվածն ամբողջությամբ հանեց Ատրներսեհի ենթակայությունից, որից հետո Վրաց իշխանի տիրույթները՝ ըստ սկզբնաղբյուրների, հարավում սկսվում էին Կղարջքից:

ТАЙКСКОЕ КНЯЖЕСТВО В СТРУКТУРЕ ДЕРЖАВЫ АРМЯНСКИХ БАГРАТУНИ

АРМАН ЕГИАЗАРЯН

Р е з ю м е

Во время господства арабов Тайк входил в административную единицу Третья Арминия наместничества Арминия Арабского халифата. В конце VIII в. граница Третьей Армении со Второй Арменией, куда входила область Великой Армении Гугарк, пролегала по линии соприкосновения Тайка и Гугарка. Когда после восстания армян в 774–775 гг. младшая ветвь Багратуни основалась в западной области Гугарка Кхарджке, она завладела соседними землями и некоторыми северными областями Тайка. Когда Тайк стал владением армянских Багратуни при Ашоте Багратуни (790–826), так называемые грузинские Багратуни отошли в Кхарджк. В конце IX в. при кюропалате Кхарджка Атрнерсе северная область Тайка Ког входила в его княжество, но после абхазо-армянской войны и

после того, как он примкнул к эмиру Атрпатакана, армянский царь Смбат I (890–914) отнял у него эту область. В Тайке князем был некий Горам, которого поставил Смбат I.

PRINCIPALITY OF TAIK IN THE STRUCTURE OF THE POWER OF ARMENIAN BAGRATUNIS

ARMAN YEGHIAZARYAN

S u m m a r y

At the time of domination of the Arabs Taik was included in administrative unity of the Third Arminia of the Viceroyalty of Arminia of the Arabian Caliphate. At the end of the 8th century the boundary between the Third Arminia and the Second Armenia, which included region of Greater Armenia Gugark, was along splice line of regions Taik and Gugark. When after the rise of Armenians in 774–775 a junior heir of the Bagratunis settled down in the western region of Gugark Kgharjk, it possessed adjacent territories and some northern regions of Taik. When at the time of Ashot Bagratuni (790–826) Taik became a domain of Armenian Bagratunis, the so-called Georgian Bagratunis left for Kgharjk. At the end of the 9th century at the time of prince of Kgharjk Atrnerseh the northern region of Taik Kogh was included in his principality, but after the Abkhazian-Armenian war and after Atrnerseh joined the emir of Atrpatakan, Armenian king Smbat I (890–914) took that region from his principality. In Taik governed a certain Goram, who was appointed there by Smbat I.